ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 1-Լ

«07» 01 2025 թ. գ. Երևան

ՍՅՈՒՆԻՔԻ ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ, ԹԻՎ 1 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ, ԹԻՎ 2 ԿԱՅԱԶՈՐԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորների առկա տեղաբաշխումը, դրանով պայմանավորված՝ Սյունիքի կայազորի զինվորական դատախազության, Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության, Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության անվանումները և դրանից բխող՝ ՀՀ դատախազության համապատասխան աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները փոփոխելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հրամայում եմ՝

1. Սյունիքի կայազորի զինվորական դատախազության անվանումը փոփոխել և անվանել Կապանի կայազորի զինվորական դատախազություն, Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության անվանումը փոփոխել և անվանել Տավուշի կայազորի զինվորական դատախազություն, Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության անվանումը փոփոխել և անվանել Սիսիանի կայազորի զինվորական դատախազություն:

2. Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի անվանումը փոփոխել և անվանել Կապանի կայազորի զինվորական դատախազության

տարածքային բաժին, Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի անվանումը փոփոխել և անվանել Տավուշի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին, Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի անվանումը փոփոխել և անվանել Սիսիանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի հրամաններում և հանձնարարականներում.

1) «Սյունիքի կայազորի զինվորական դատախազություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կապանի կայազորի զինվորական դատախազություն» բառերով և դրանց հոլովաձևերով,

2) «Թիվ 1 կայազորի զինվորական դատախազություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Տավուշի կայազորի զինվորական դատախազություն» բառերով և դրանց հոլովաձևերով,

3) «Թիվ 2 կայազորի զինվորական դատախազություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Սիսիանի կայազորի զինվորական դատախազություն» բառերով և դրանց հոլովաձևերով,

4) «Սյունիքի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Կապանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերով և դրանց հոլովաձևերով,

5) «Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Տավուշի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերով և դրանց հոլովաձևերով,

6) «Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Սիսիանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին» բառերով և դրանց հոլովաձևերով:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

6. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ